

2016 թվականի առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրված հրդեհների և դրանց հետևանքների վիճակագրություն

2016թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏՍՏ-ում հաշվառվել է 447 հրդեհ՝ 252 192 456 դրամի նյութական վնասով, զոհվել է 2 և վնասվածքներ ստացել՝ 13 մարդ: 2015թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել էր 330 հրդեհ՝ 116 593 627 դրամի նյութական վնասով, զոհվել էին 6 և վնասվածքներ ստացել՝ 4 մարդ: Այսպիսով, հրդեհների քանակն աճել է 117 դեպքով (35.45%), վնասվածք ստացածներինը՝ 9-ով (3.25 անգամ), նյութական վնասի գումարը՝ 135 598 829 դրամով (2.16 անգամ), իսկ զոհերի թիվը նվազել է 4-ով (66.66%):

Հրդեհների քանակը նվազել է Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի, Կոտայքի մարզերում, իսկ աճել՝ Երևան քաղաքում և մնացած բոլոր մարզերում: Հրդեհների 34.7%-ը տեղի է ունեցել բնակելի հատվածում, 23%-ը՝ բաց և խոտածածկ տարածքներում, 11.6%-ը՝ ավտոմեքենաներում, իսկ 30.7%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 49%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 26.4%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 6%, հրկիզումները՝ 5.1%, երեխաների խաղալը կրակի հետ՝ 4.5%:

Հրդեհների 61.1%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 39.9%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 16-ը խոշոր են (նախորդ տարի՝ 10), որոնցից պատճառված նյութական վնասի գումարը կազմել է 153 959 605 դրամ, որն ընդհանուր նյութական վնասի 61.04%-ն է: Առավել խոշոր հրդեհներից են՝

1. 17 հունվարի, ք.Երևան, Արցախի 42, <<ՖԼԵՇ>> ՍՊԸ, պահեստ: Նյութական վնասը՝ 89 324 000 դրամ: Հրդեհի առաջացման հավանական պատճառը՝ ստատիկ լիցքերի առկայությունը կամ մեխանիկական ազդեցության հետևանքով առաջացած կայծը:

2. 23 հունվարի, ք.Երևան, Ա.Զորավարի 11/1, <<Մանդարին կոսմետիկս>> ՍՊԸ, պահեստ: Նյութական վնասը՝ 10 900 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

3. 28 հունվարի, ք.Երևան, Նոր Խարբերդի ամառանոցների 8 փողոց, վագոն-տնակ: Նյութական վնասը՝ 5 000 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ վառարանի շահագործման կանոնների խախտում:

4. 15 փետրվարի, Սպիտակ-Երևան ավտոճանապարհ, <<Nissan-XTerra 4.0>> մակնիշի ավտոմեքենա: Նյութական վնասը՝ 4 500 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ էլեկտրահաղորդալարերի կարճ միացում:

5. 8 փետրվարի, Լոռու մարզ, գ.Վահագնաձոր, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, տուն 2: Նյութական վնասը՝ 4 200 000 դրամ: Հրդեհի առաջացման պատճառը՝ վառարանի շահագործման կանոնների խախտում:

Զոհերով հրդեհների առաջացման պատճառը էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումն է: 2 զոհերն էլ արձանագրվել են Շիրակի մարզում՝ բնակելի հատվածում:

Թվով 6 մարդ վնասվածքներ է ստացել բաց տարածքում, 3-ական՝ բնակելի հատվածում և ավտոմեքենաներում, ևս մեկը՝ ԱԳԼԾԿ-ում: Վնասվածքները գրանցվել են Լոռիում՝ 8, ք.Երևանում՝ 2, Տավուշում, Արագածոտնում և Սյունիքում՝ մեկական:

Դատաքննչական մարմիններ է ուղարկվել 56 հրդեհի նյութ, որոնցով քրեական գործեր են հարուցվել 15 դեպքում: Տեսչության տարածքային մարմինների կողմից կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին 208 որոշումներ, որոնց օրինականությունը ստուգվել է համապատասխան տարածաշրջանի դատախազությունների կողմից:

Կատարվել է արձանագրված հրդեհների հաշվառում, վերլուծություն և վիճակագրական տվյալները լուսաբանվել են գրաֆիկներով ու աղյուսակներով:

ՊՀ և ՏԱՏ հրդեհների հաշվառման, վերլուծության
և հակահրդեհային քարոզչության բաժնի պետ

Ս.Հայրապետյան